ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 7 » ..մարտ....20 18 թ. N 59 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ, ԿՈՏԱՅՔԻ, ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻՆ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից 2018 թվականի մարտի 1-ի N 25 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված մոնիթորինգի արդյունքների հիման վրա մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2018 թվականի գարնանը մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի և Տավուշի մարզերին հատկացվող «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի (այսուհետ՝ բույսերի պաշտպանության միջոց) բաշխացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպության տնօրեն Ն. Բարսեղյանին՝

1) ապահովել բույսերի պաշտպանության միջոցի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի ու Տավուշի մարզկենտրոններ և անհատույց հանձնումը մարզպետարաններին կամ

վերջիններիս կողմից լիազորված անձանց՝ սույն հրամանի հավելվածով սահմանված չափաքանակներով,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Աշ. Հարությունյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված

ՀՀ գուղատնտեսության նախարարի

2018 թվականի մարտի 7 -ի N -59 -Ա հրամանի

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ, ԿՈՏԱՅՔԻ, ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ

Մարզը	Տարածությունը (հա)	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը (կգ)
Արագածոտն	60	4.8
Արարատ	1780	142.4
Արմավիր	1715	137.2
Կոտայք	300	24
Սյունիք	560	44.8
Տավուշ	1000	80
Ընդամենը	**5415**	**433.2**